*ձապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Փիլիպպոս փոքր աղբակու լինիցիս իշխան զանձապետութեան, զի որում աշխարհէ և քաղաքէ զոր ինչ զանձ որում իշխանէ և պաշտօնի, որ յանձնեսցի քեզ զանձն ստանասցես և տացես նոցայ թուղթ ստացելոյ որքանութեան դրամացն, զոր ինչ թուղթ 'ի քէն ստացեալ որ ոք քանակութեան զանձոց 'ի ձեռս ում որ գտցի նոյն թուղթ ընդունելի մեզ որքայնութիւնն բանին, և իբրև մեր ստացեալ, և պատուիրեմք քեզ զի պահելով զանձն տանն հայոց 'ի ամուրս քաղաքի և տացես համար 'ի դրունս տանն հայոց ամենայն ամսոյ և սպասիցես մերոյ հրամանի, դրուեցաւ 'ի դրունս և այլն։*

| | |
|---|---|
| *Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.* | *Ա. Տ.* ○<br>*Վ. Տ.* ○<br>*Գ. Տ.* ○ |

*Մ. Ի.* ○
*Մ. Գ.* ○

Օրինակ նամակի Երկրաչափութեան։

## ԳԼՈՒԽ ՀԲ.

*Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհին վասպուրականի և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդ-*